

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՊՈՂՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 44068/07)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2011թ. դեկտեմբերի 20

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:



Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ*
Corneliu Bîrsan,
Alvina Gyulumyan,
Ján Šikuta
Luis López Guerra,
Nona Tsotsoria,
Mihai Poalelungi, *դատավորներ*
և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար*

2011թ. նոյեմբերի 29-ին դռնփակ նիստում կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2007թ. սեպտեմբերի 28-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի քաղաքացի պրն. Գասպար Պողոսյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 44068/07 գանգատի հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էր Երևանում գործող փաստաբան պրն. Լ. Սիմոնյանը: ՀՀ կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2009թ. սեպտեմբերի 8-ին Երրորդ Բաժանմունքի Նախագահն որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Ինչպես նաև որոշվեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին մաս):

ՓԱՍՏԵՐԸ

Ի. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1981թ. և ապրում է Երևան քաղաքում:

5. Դիմումատուի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել գողության և խարդախության համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի և 178-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

6. 2007թ. փետրվարի 15-ին դիմումատուին մեղադրանք է ներկայացվել: Դիմումատուի նկատմամբ հետախուզում էր հայտարարվել, քանի որ նա թաքնվում էր հետաքննությունից:

7. Նույն օրը Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը քննեց և բավարարեց դիմումատուին նախնական կալանքի տակ պահելու մասին քննիչի միջնորդությունը: Այս որոշումը հիմնվում էր վերագրվող արարքների բնույթի և վտանգավորության աստիճանի, ինչպես նաև այն փաստի վրա, որ դիմումատուն թաքնվում էր հետաքննությունից և կարող էր խոչընդոտել գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ճնշում գործադրելով: Կալանավորումը սահմանվեց երկու ամիս ժամկետով և պետք է հաշվարկվեր դիմումատուին կալանքի տակ վերցնելու պահից:

8. 2007թ. ապրիլի 13-ին դիմումատուն ձերբակալվեց և փոխադրվեց Արարատի մարզի ոստիկանության բաժին, որտեղ նա տեղեկացավ 2007թ. փետրվարի 15-ի որոշման մասին: Այնուհետև դիմումատուն փոխադրվեց «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

9. 2007թ. մայիսի 31-ին դիմումատուն գրավի դիմաց կալանքից ազատվելու միջնորդություն ներկայացրեց Արարատի մարզի առաջին ատյանի դատարան: Դիմումատուն ի սկզբանե նշեց, որ առաջին ատյանի դատարանը, հաշվի չառնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 137-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները (տե՛ս 29-րդ պարբերությունը), 2007թ. փետրվարի 15-ի որոշման մեջ չի անդրադարձել իրեն գրավի դիմաց կալանքից ազատելու հարցին: Նա հետագայում նշեց, որ մեղադրանքի ծանրության պատճառով գրավի դիմաց կալանքից ազատվելու օրենքով նախատեսված իրավունք չունենալու փաստը

հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը: Դիմումատուն խնդրեց դատարանին կիրառել Կոնվենցիայի պահանջները և ազատ արձակել իրեն, նշելով, որ չի թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Դիմումատուն պնդեց, որ մինչ իր ձերբակալությունը նա գործնական նպատակներով բացակայում էր քաղաքից և երբևէ չէր տեղեկացվել իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին: Եվ, վերջապես, նա պնդեց, որ իր ձերբակալությունից հետո իրեն չեն ներկայացրել դատարանի առջև ի հակասություն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների:

10. 2007թ. հունիսի 5-ին հետաքննությունն ավարտվեց:

11. 2007թ. հունիսի 8-ին Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը քննեց 2007թ. մայիսի 31-ին ներկայացված միջնորդությունը: Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, ի սկզբանե նշեց, որ միջազգային իրավունքի դրույթները գերակայություն ունեն ներպետական իրավունքի դրույթների նկատմամբ, հետևաբար, դիմումատուին գրավի դիմաց կալանքից ազատելու հարցը ենթակա էր քննության: Այնուամենայնիվ, առաջին ատյանի դատարանը որոշեց մերժել դիմումատուի ազատ արձակելու վերաբերյալ պահանջը, գտնելով, որ առկա է դիմումատուի՝ քննությունից թաքնվելու վտանգ և հետևաբար պատասխանատվությունից և պատժից խուսափելու վտանգ՝ հաշվի առնելով այն փաստը, որ նա նախկինում թաքնվել է հետաքննությունից: Այս որոշումն ենթակա էր բողոքարկման տասնհինգ օրվա ընթացքում:

12. Նույն օրը ներկայացվեց մեղադրական եզրակացությունը:

13. 2007թ. հունիսի 12-ին քրեական գործն ուղարկվեց Արարատի մարզի առաջին ատյանի դատարան:

14. 2007թ. հունիսի 13-ին դիմումատուին կալանքի տակ պահելու 2007թ. փետրվարի 15-ի որոշմամբ սահմանված ժամկետը սպառվեց:

15. 2007թ. հունիսի 15-ին դիմումատուն բողոք ներկայացրեց 2007թ. հունիսի 8-ի որոշման դեմ: Նա նաև դիմեց «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին և պահանջեց իրեն ազատ արձակել, քանի որ իր նկատմամբ սահմանված կալանքի ժամկետը լրացել էր 2007թ. հունիսի 13-ին:

16. Նույն օրը Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Յ.-ն որոշեց քննության առնել դիմումատուի կապակցությամբ հարուցված քրեական գործը:

17. 2007թ. հունիսի 18-ի նամակով «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետը մերժեց ազատ արձակման մասին դիմումատուի պահանջն այն հիմքով, որ գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան:

18. 2007թ. հունիսի 29-ին դիմումատուն նշված մերժումը բողոքարկեց Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պնդելով, որ իրեն շարունակաբար կալանքի տակ պահելը անօրինական է:

19. 2007թ. հուլիսի 2-ին դատավոր Յ.-ն որոշեց դիմումատուի կապակցությամբ հարուցված քրեական գործը 2007թ. հուլիսի 12-ին նշանակել դատական քննության: Սույն որոշմամբ հաստատվեց, որ դիմումատուի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու անհրաժեշտություն չկար:

20. 2007թ. հուլիսի 6-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, վկայակոչելով ՔԴՕ-ի 39-րդ գլուխը, որտեղ ամրագրված են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության պայմանները, որոշեց դիմումատուի 2007թ. հունիսի 15-ի բողոքը թողնել առանց քննության այն հիմքով, որ մինչդատական վարույթն արդեն ավարտվել էր:

21. 2007թ. հուլիսի 12-ին Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մերժեց դիմումատուի 2007թ. հունիսի 29-ին բերված բողոքը՝ գտնելով, որ նրան ազատ արձակելու մերժումն օրինական էր և համապատասխանում էր ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի պահանջներին:

22. 2007թ. հուլիսի 27-ին դիմումատուն բողոք ներկայացրեց սույն որոշման դեմ:

23. 2007թ. օգոստոսի 2-ին դիմումատուն ազատ արձակվելու խնդրանքով միջնորդություն ներկայացրեց Արարատի մարզի առաջին ատյանի դատարան:

24. Նույն օրն Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը քննեց և մերժեց այս միջնորդությունը: Դատարանը գտավ, որ 2007թ. հունիսի 13-ից հետո դիմումատուի կալանավորումը հիմնավորված էր ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասով (տե՛ս ստորև նշված 31-րդ պարբերությունը), քանի որ 2007թ. հուլիսի 2-

ից հետո նրա կալանավորումը սահմանվել էր նույն օրը կայացրած դատարանի որոշմամբ:

25. 2007թ. օգոստոսի 22-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժեց 2007թ. հուլիսի 27-ին դիմումատուի ներկայացրած բողոքը՝ ընդհանուր իրավասության դատարանի կողմից նշված միևնույն հիմքերով:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Ա. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

26. Համաձայն 65-րդ հոդվածի՝ մեղադրյալն իրավունք ունի, *inter alia,* միջնորդություններ ներկայացնել:

27. Համաձայն 134-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ: Դրանք ներառում են, *inter alia,* կալանավորումը և գրավը: Գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է մեղադրյալին կալանավորելու մասին դատարանի որոշումը:

28. Համաձայն 136-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կալանավորումը, գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս: Գրավը կալանավորման փոխարեն դատարանը կարող է կիրառել նաև պաշտպանության կողմի միջնորդությամբ:

29. Համաձայն 137-րդ հոդվածի 4-րդ մասի՝ կալանավորման մասին որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը:

30. Համաձայն 137-րդ հոդվածի 5-րդ մասի՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան:

31. Համաձայն «Կալանքի տակ պահելու ժամկետը» վերնագրով 138-րդ հոդվածի 1-ին մասի՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը հաշվվում է ձերբակալելիս անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից, իսկ եթե նա չի ձերբակալվել, ապա այդ խափանման միջոցն ընտրելու մասին դատարանի որոշումը կատարելու պահից:

32. Համաձայն 138-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան, կամ կալանավորումը՝ որպես խափանման միջոց վերացվում է:

33. Համաձայն 138-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի՝ քրեական գործով մինչդատական վարույթում մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին: Դատարանում գործի քննության ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ չի սահմանվում:

34. Համաձայն 139-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետն երկարացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը, դատախազը, ոչ ուշ, քան կալանքի տակ պահելու ժամկետը լրանալուց 10 օր առաջ, պետք է դատարան ներկայացնեն պատճառաբանված միջնորդություն: Մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետն երկարացնելու մասին որոշում կայացնելիս դատարանը կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնում է սույն օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ յուրաքանչյուր դեպքում 2 ամսից ոչ ավելի ժամանակով:

35. Համաձայն 141-րդ հոդվածի 10-րդ կետի՝ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է, *inter alia,* անհապաղ ազատ արձակել առանց դատարանի համապատասխան որոշման կալանավորված, ինչպես նաև դատարանի որոշմամբ կալանքի տակ պահելու սահմանված ժամկետը լրացած անձանց:

36. Համաձայն 285-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը դատարանը քննում

է միջնորդությունը ներկայացրած անձի և հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպանի մասնակցությամբ, եթե նա մասնակցում է գործին:

37. Համաձայն 288-րդ հոդվածի 1-ին մասի՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետն երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

38. Համաձայն 291-րդ հոդվածի՝ դատարան մուտք եղած քրեական գործը դատավորները սահմանված կարգով իրենց վարույթ են ընդունում, որի մասին կայացվում է որոշում:

39. Համաձայն 292-րդ հոդվածի՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից տասնհինգ օրվա ընթացքում կայացնում, *inter alia,* դատական քննություն նշանակելու մասին որոշում:

40. Համաձայն 293-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ պետք է բովանդակվի, *iner alia,* որոշում՝ խափանման միջոցները և պատճառված վնասի ապահովման միջոցները վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին:

41. Համաձայն 381-րդ հոդվածի 1-ին մասի՝ վերաքննիչ բողոքը պետք է բովանդակի՝ ա) այն դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը, բ) տվյալներ՝ բողոք բերած անձի մասին՝ նշելով նրա դատավարական կարգավիճակը, բնակության կամ գտնվելու վայրը, գ) դատական ակտը, որը բողոքարկվում է, և այն կայացրած դատարանի անվանումը, դ) նշում այն մասին, թե դատական ակտը բողոքարկվում է ամբողջությամբ, թե մի մասով, ե) բողոք բերած անձի հիմնավորումները և պահանջները, զ) առկայության դեպքում՝ իր պահանջները հիմնավորող ապացույցները, է) բողոքին կցվող նյութերի ցանկը և ը) բողոք ներկայացնող անձի ստորագրությունը: Համաձայն 381-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերաքննիչ դատարանը բողոքը թողնում է առանց քննության, եթե վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով նախատեսված պահանջներին, այսինքն՝ բերել է այն անձը, ով բողոք բերելու

իրավունք չուներ կամ բողոքը բերվել է սահմանված ժամկետի խախտմամբ:

Բ. ՀՀ քրեական օրենսգիրք

42. Համաձայն 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ գողությունը, որը կատարվել է բնակարան, պահեստարան կամ շինություն կրկին անգամ ապօրինի մուտք գործելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

43. Համաձայն 178-րդ հոդվածի 1-ին մասի՝ խարդախությունը պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Գ. ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումները

44. 2008թ. նոյեմբերի 28-ին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել մեկ ուրիշ քրեական գործով, որտեղ ամրագրված է, որ.

> «...Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ նրան կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքի սահմանափակումը՝ ելնելով այն հանգամանքից՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, թե դատական քննության փուլում գտնվող գործի շրջանակներում են դրանք բողոքարկվել, անթույլատրելի է: ...
>
> Սույն գործով կայացված՝ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կալացնելիս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հիմնվել է փաստի վրա, որ քրեական գործի նախաքննությունն ավարտված է և գործն ուղարկվել է դատարան լինելու հանգամանքը, որպիսին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված չէ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով բողոքարկվել է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ, որն առանց քննության թողնելու ենթակա չէր: ...
>
> *Վերաքննիչ դատարանի կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի ... խախտման մասին:*
> ... ներպետական քրեական դատավարության օրենսդրությունը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ անձին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին ընդհանուր իրավասության դատարանի

որոշման բողոքարկման համար որևէ սահմանափակում չի նախատեսում՝ ելնելով այն հանգամանքից, թե որ փուլում է գտնվում գործը:»

45. 2008թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել մեկ այլ քրեական գործով, որտեղ ամրագրված է, որ.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ [*inter alia*, ՔԴՕ-ի 285-րդ հոդվածի մաս 2], հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի ընտրությունը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ [ձերբակալված անձի] դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջին: [ՔԴՕ-ի նշված հոդվածը] վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն է տալիս անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրել անձի բացակայության պայմաններում՝ առանց հետախուզման արդյունքում հայտնաբերված անձին հնարավորություն ընձեռելու, որ վերջինս ներկայանա դատարան, և իր կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենքի նման կարգավորումը կխախտի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի...

...Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ ներպետական երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նրա ներկայությամբ նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի լրացուցիչ քննարկումը նույն դատարանի կողմից:»

46. 2009թ. ապրիլի 10-ին, ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել մեկ այլ քրեական գործով, որտեղ ամրագրված է, որ.

«Հաշվի առնելով *Ջեսիուսն ընդդեմ Լիտվայի* գործով վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացրած հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատախազի կողմից գործը դատարան ուղարկելու փաստի հիման վրա անձին կալանքի տակ պահելու ժամկետի կասեցումն անձի ազատության իրավունքի անօրինական սահմանափակում է: Ուստի [ՔԴՕ-ի] 138-րդ հոդվածի 3-րդ մասում առկա կարգավորումը հակասում է [Կոնվենցիայի] 5-րդ հոդվածի 1-ին մասին, [ՔԴՕ-ի] 11-րդ հոդվածի 2-րդ և 136-րդ հոդվածի 2-րդ մասերին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ կալանքի երկամսյա ժամկետի ավարտին մնացել է 15 օրից քիչ ժամանակ, այսինքն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորի կողմից [ՔԴՕ-ի] 292-րդ

հոդվածով նախատեսված որոշումներից մեկի կայացման ժամկետից պակաս ժամանակ, նախաքննության մարմինը գործը դատարան ուղարկելու հետ միաժամանակ պետք է լուծի նաև անձի կալանքի հարցը, այն է՝ պետք է անձին ազատ արձակի, եթե վերացել են նրան կալանքի տակ պահելու հիմքերը, կամ դատարանին միջնորդություն ներկայացնի կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ, եթե առկա են [համապատասխան հիմքերը]:»

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

47. Դիմումատուն բողոքեց, որ 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ը ընկած ժամանակահատվածում իրեն կալանքի տակ պահելն անօրինական էր: Նա վկայակոչեց Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով...»:

Ա. Ընդունելիությունը

48. Դատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի իմաստով ակնհայտորեն անհիմն չէ: Դատարանը նշում է նաև, որ գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի դիրքորոշումները

49. Դիմումատուն պնդեց, որ ներպետական օրենսդրությունը, մասնավորապես՝ ՔԴՕ-ի 136-րդ հոդվածը, կալանավորման կիրառումը նախատեսում է միայն դատարանի որոշմամբ: Դատարանի կողմից դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի տակ պահելու ժամկետը սպառվել էր 2007թ. հունիսի 13-

ին, և մինչև 2007թ. հուլիսի 2-ը նրան կալանքի տակ պահելու դատարանի որոշում չկար: Այդ ժամանակահատվածում դիմումատուն մնացել է կալանքի տակ համաձայն ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի: Դիմումատուն բողոքեց, որ ՔԴՕ-ի համապատասխան հոդվածներն երկիմաստ են և չեն համապատասխանում Կոնվենցիայով ամրագրված օրինականության պահանջներին: Ավելին, դիմումատուին կալանքի տակ պահելն այն հիմքով, որ իր քրեական գործը ուղարկվել է դատարան, չի կարող համարվել օրինական 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով: Հետևաբար, 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում դիմումատուին կալանաքի տակ պահելու համար որևէ օրինական հիմք չկար:

50. Կառավարությունը պնդեց, որ 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում դիմումատուին կալանքի տակ պահելը համապատասխանում էր ՔԴՕ-ի դրույթների պահանջներին, մասնավորապես՝ 138-րդ հոդվածի 3-րդ մասի: Դատարանի կողմից նշանակված դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը պետք է սպառվեր 2007թ. հունիսի 13-ին: Հաշվի առնելով այդ փաստը՝ 2007թ. հունիսի 8-ին մեղադրական եզրակացությունը կազմվեց, և 2007թ. հունիսի 12-ին քրեական գործը հանձնվեց Արարատի մարզի առաջին ատյանի դատարան՝ գործն ըստ էության քննելու համար: 2007թ. հուլիսի 2-ին առաջին ատյանի դատարանը որոշում կայացրեց դիմումատուի վերաբերյալ քրեական գործը նշանակել դատական քննության և դիմումատուի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքը թողնել անփոփոխ:

51. Կառավարությունն ավելացրեց, որ այս ընթացակարգը Դատարանի նախադեպային իրավունքի և Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների պրակտիկայի հետ համապատասխանեցնելու նպատակով փոփոխությունների գործընթացի մեջ է: Կառավարությունը խնդրեց Դատարանին սույն գործը քննելիս հաշվի առնել այդ հանգամանքը:

2. Դատարանի գնահատականը

52. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքը: Կոնվենցիայի իմաստով (տե՛ս *De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, 18 հունիս 1971թ., պարբ. 65, Սերիա Ա

թիվ 12; և *Winterwerp v. the Netherlands*, 24 հոկտեմբեր 1979թ., պարբ. 37, Սերիա A թիվ 33) այդ իրավունքն առաջնային կարևորություն ունի «ժողովրդավարական հասարակության» մեջ:

53. 5-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտություններն ըստ էության վերագրվում են ներպետական օրենսդրությանը և դրա նյութական և ընթացակարգային նորմերին ենթարկվելու պարտավորություն են սահմանում (տե՛ս *Benham v. the United Kingdom*, 10 հունիս 1996թ., պարբ. 41, *Զեկույցներ* 1996-III; և *Assanidze v. Georgia* [ՄՊ], թիվ 71503/01, պարբ. 171, ՄԻԵԴ 2004-II): Կալանքի տակ պահելու ժամկետը սկզբունքորեն «օրինական» է, եթե այն հիմնված է դատարանի որոշման վրա: Նույնիսկ կալանքի հրամանի թերացումները անխուսափելիորեն չեն հանգեցնում կալանքի տակ պահելու հիմնական ժամկետի անօրինականությանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով (տե՛ս վերը նշված՝ *Benham*, պարբ. 42-47; և *Ječius v. Lithuania*, թիվ. 34578/97, պարբ. 68, ՄԻԵԴ 2000-IX).

54. Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրությամբ նախատեսված կալանավորման «օրինականությունը» առաջնային, բայց ոչ միշտ վճռորոշ տարր է: Դատարանը պետք է նաև համոզվի, որ քննարկվող ժամանակահատվածի ընթացքում կալանքի տակ պահելը համահունչ էր 5-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների հետ, այն է՝ կանխել մարդկանց կամայական զրկումն ազատությունից: Ավելին, Դատարանը պետք է պարզի, թե արդյոք ներպետական օրենսդրությունն ինքնին համապատասխանում է Կոնվենցիային, թե՝ ոչ, ներառյալ՝ սահմանված և կիրառված ընդհանուր սկզբունքները (տե՛ս, մյուս հեղինակների հետ մեկտեղ, վերը նշված՝ *Winterwerp*, պարբ. 45; և *Erkalo v. the Netherlands*, 2 սեպտեմբեր 1998թ., պարբ. 52, *Զեկույցներ վճիռների և որոշումների մասին* 1998-VI):

55. Վերջին հարցի կապակցությամբ Դատարանն ընդգծում է, որ ազատազրկման հարցը քննելիս առանձնապես կարևոր է ապահովել իրավական հստակության համընդհանուր սկզբունքի պահպանումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված ազատազրկման պայմանները հստակ սահմանված լինեն և օրենսդրությունը կիրառման մեջ ինքնին լինի կանխատեսելի, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով նախատեսված

«օրինականության» չափանիշներին, որոնց համաձայն՝ ամբողջ օրենսդրությունը պետք է բավարար չափով հստակ լինի, որպեսզի հնարավորություն ընձեռնի մարդուն, անհրաժեշտության դեպքում և համարժեք խորհուրդի դեպքում, տվյալ հանգամանքներում ողջամիտ սահմաններում կանխատեսել կատարված գործողության հնարավոր հետևանքները (տե՛ս *Steel and Others v. the United Kingdom*, 23 սեպտեմբեր 1998թ., պարբ. 54, *Զեկույցներ վճիռների և որոշումների մասին* 1998-VII).

56. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից 2007թ. փետրվարի 15-ին նշանակված դիմումատուի կալանավորման ժամկետը լրացել էր 2007թ. հունիսի 13-ին (տե՛ս վերը շարադրված 7-րդ և 14-րդ պարբերությունները): Միևնույն ժամանակ հետաքննությունն ավարտվել էր, և 2007թ. հունիսի 12-ին քրեական գործն ուղարկվել էր ընդհանուր իրավասության դատարան գործի ըստ էության քննության համար: Դիմումատուին կալանքի տակ պահելու հարցի կապակցությամբ դատարանի հաջորդ որոշումը կայացվել է 2007թ. հուլիսի 2-ին, երբ ընդհանուր իրավասության դատարանը որոշում կայացրեց գործը նշանակել դատական քննության (տե՛ս վերը շարադրված 19-րդ պարբերությունը): Այսպիսով, 2007թ. հունիսի 13-ի և հուլիսի 2-ի միջև ընկած ժամանակահատվածում դիմումատուն կալանքի տակ է գտնվել ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա, համաձայն որի՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան:

57. Դատարանը նշում է, որ նմանատիպ, բայց ոչ նույնատեսակ իրադրություններ նախկինում քննվել են մի շարք այլ գործերով (տե՛ս *Baranowski v. Poland*, թիվ. 28358/95, պարբ. 53-58, ՄԻԵԴ 2000-III; *Ječius*, վերը նշված, պարբ. 57-64; և *Khudoyorov v. Russia*, թիվ. 6847/02, պարբ. 146-151, ՄԻԵԴ 2005-... (հատվածներ)). Մասնավորապես, *Baranowski* և *Khudoyorov* գործերով դիմումատուները շարունակում էին պահվել կալանքի տակ այն հիմքով, որ մեղադրական ակտ էր ներկայացվել նրանց գործերը քննելու իրավասություն ունեցող դատարան: Ի տարբերություն սույն գործի, այս գործերում այդ պրակտիկան հիմնված չէր որևէ ներպետական իրավական նորմի վրա: Մյուս կողմից, *Ječius*

գործով դիմումատուին շարունակաբար կալանքի տակ պահելը այն հիմքով, որ նա ուներ գործի նյութերից օգտվելու հնարավորություն, Դատարանը գտավ, որ առկա է իրավական հստակության պակաս:

58. Դատարանը նշում է, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածը սահմանում է կալանավորման ժամկետին առնչվող նորմեր, մասնավորապես՝ դրանց հաշվարկումը և ժամկետային սահմանափակումները: Համաձայն այդ հոդվածի՝ մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել երկամսյա ժամկետը, քանի դեռ չի երկարացվել դատարանի որոշմամբ՝ յուրաքանչյուր անգամ 2 ամիսը չգերազանցող ժամկետով (ՔԴՕ-ի 139-րդ հոդվածի 3-րդ մաս): Այնուամենայնիվ, 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետի ընթացքը կասեցվում է այն օրը, երբ դատախազը քրեական գործն ուղարկում է դատարան: Այդ նորմը նպատակ է հետապնդում արդարացնել գործն ըստ էության քննելու համար դատարան փոխանցելուց հետո անձին շարունակաբար կալանքի տակ պահելը, նույնիսկ եթե դատարանի կողմից նշանակված մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետն արդեն սպառվել է, որը տեղի է ունեցել դիմումատուի գործով:

59. Դատարանը գտնում է, որ 138-րդ հոդվածի 3-րդ մասում նշված նորմն ուղղակիորեն հակասում է ՔԴՕ-ի 136-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված պահանջներին, որը նախատեսում է, որ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել բացառապես դատարանի որոշմամբ: Այն նաև հակասում է ՔԴՕ-ի 141-րդ հոդվածի 10-րդ կետին, որը սահմանում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի պարտավորությունը՝ անհապաղ ազատ արձակել առանց դատարանի համապատասխան որոշման կալանավորված, ինչպես նաև դատարանի որոշմամբ կալանքի տակ պահելու սահմանված ժամկետը լրացած անձանց: Դատարանը 138-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումը չի համարում բավարար հստակ, որպեսզի այդ նորմի համար ապահովի պարզ, կանխատեսելի և միանշանակ բացառություններ: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին:

60. Դատարանը նաև նշում է, որ *Baranowski* գործում Դատարանը ընդգծել էր, որ 5-րդ հոդվածի 1-ին մասի նպատակից ելնելով՝ կալանավորումը, որը տևել էր մի քանի ամիս և որը չի նշանակվել դատարանի, դատավորի կամ «դատական իշխանություն իրականացնելու ... իրավասություն ունեցող» ցանկացած այլ անձի կողմից, այդ դրույթի իմաստով չի կարող համարվել «օրինական»: Քանի դեռ այս պահանջը ուղղակիորեն նախատեսված չէ 5-րդ հոդվածի 1-ին մասում, այն կարող է ենթադրվել 5-րդ հոդվածի ամբողջ իմաստից, մասնավորապես՝ 1-ին մասի «գ» կետի և 3-րդ մասի ձևակերպումից (տե՛ս վերը նշված *Baranowski* գործը, պարբ. 57): Սույն գործով դիմումատուն առանց դատարանի որոշման կալանքի տակ է պահվել տասնինը օր, ինչը ավելի կարճ ժամանակ է, քան *Baranowski* գործով առկա ժամկետը (մոտավորապես չորս ամիս), սակայն Դատարանի կարծիքով բավականաչափ երկար է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասով օրինականության հարցը բարձրացնելու համար:

61. Դատարանը նաև նշում է, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասը չի սահմանում որևէ ժամկետի սահմանափակում, հետևաբար անձին անորոշ ժամանակով կալանքի տակ պահելու համար որևէ երաշխիք չի նախատեսում: Իսկապես, ՔԴՕ-ի 292-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի գործը վարույթ ընդունած դատավորը տասնհինգ օրվա ընթացքում կայացնի որոշում կալանքի նշանակման մասին (տե՛ս վերը նշված 39-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, առաջին հերթին, այդ ժամկետն ընթացքի մեջ է մտնում այն օրվանից, երբ դատավորը որոշում է կայացնում գործն ընդունել վարույթ և ոչ թե այն օրվանից, երբ գործն ուղարկվում է դատարան: Այնուամենայնիվ, ժամանակային որևէ սահմանափակում նախատեսված չէ գործն ստանալուց հետո դատավորի կողմից այն վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու համար (տե՛ս վերը նշված 38-րդ պարբերությունը): Երկրորդ՝ ինչպես որ սույն գործում, չկա դատավորի կողմից տասնհինգօրյա ժամկետի պահպանման որևէ երաշխիք (տե՛ս վերը նշված 16-րդ և 19-րդ պարբերությունները): Դատարանը նշում է, որ այդ նույնիսկ կարճատև ձգձգման համար որևէ բացատրություն չի տրվել: Հետևաբար, չի կարելի բացառել, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա անձը կարող է պահվել կալանքի տակ առանց դատարանի որոշման էապես

ավելի երկար ժամանակ, քան ՔԴՕ-ի 292-րդ հոդվածով նախատեսված տասնհինգօրյա ժամկետը կամ նույնիսկ սույն գործում եղած տասնինն օրը:

62. Վերջապես, Դատարանը չի կարող ուշադրություն չդարձնել այն փաստին, որ ՔԴՕ-ի 138-րդ հոդվածի 3-րդ մասը թույլ է տալիս կալանավորումն կիրառել այնպիսի պայմաններում, որոնք էապես տարբերվում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից (տե՛ս *Ječius*, վերը նշված 59-րդ պարբերությունը): Դատարանը նաև նշում է, որ նմանատիպ դիրքորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը 2009թ. ապրիլի 10-ին կայացրած իր որոշման մեջ (տե՛ս վերը նշված 46-րդ պարբերությունը):

63. Վերը շարադրվածից ելնելով՝ Դատարանը գնտում է, որ 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ը դիմումատուի կալանավորումն անօրինական էր:

64. Համապատասխանաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

65. Դիմումատուն բողոքեց, որ ձերբակալությունից հետո իրեն չեն ներկայացրել դատարան: Նա վկայակոչեց Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, որտեղ ամրագրված է, որ.

> «3. Սույն հոդվածի 1-ին մասի «գ» կետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորված լինել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

Ա. Ընդունելիությունը

66. Դատարանը նշում է, որ այս գանգատն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի իմաստով: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է ճանաչվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի դիրքորոշումները

67. Դիմումատուն պնդեց, որ կալանքը որպես խափանման միջոց նշանակելու մասին 2007թ. փետրվարի 15-ի որոշումը կայացվել է իր բացակայությամբ: 2007թ. ապրիլի 13-ին նա ձերբակալվեց ոստիկանության կողմից և տեղափոխվեց նախնական կալանքի վայր, սակայն ի խախտումն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների նա երբևէ չի ներկայացվել դատարան: Սույն գործով փաստական հանգամանքներից հետո տեղ գտած օրենսդրական փոփոխությունները չեն կարող վերացնել Կոնվենցիայիով երաշխավորված դիմումատուի իրավունքի խախտումը:

68. Կառավարությունը պնդեց, որ զգալի միջոցառումներ էին ձեռնարկվել, որպեսզի լուծվի հետախուզման արդյունքում գտնված անձին դատարանի առջև ներկայացնելու խնդիրը լուծելու համար: Ներպետական օրենսդրությամբ չէր պահանջվում հետախուզման մեջ գտնվող մարդու ներկայությունն դատավարությանը, որտեղ լուծվում է իր նկատմամբ կալանք նշանակելու հարցը, և օրենսդրությամբ չէին նախատեսվում հետախուզվող անձին հայտնաբերելուց հետո ձեռնարկվող միջոցները: Այս խնդիրը բարձրացվել էր ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2008թ. դեկտեմբերի 26-ի իր որոշման մեջ (տե՛ս վերը նշված 45-րդ պարբերությունը):

2. Դատարանի գնահատականը

69. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ ձերբակալված անձն անհապաղ տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ (տե՛ս *Kandzhov v. Bulgaria*, թիվ 68294/041, պարբ. 65, 6 նոյեմբեր 2008թ.): Այս հոդվածը պարտավորեցնում է դատավորին կամ այլ պաշտոնատար անձին լսել դատարան ներկայացրած անձին (տե՛ս *Schiesse v. Switzerland*, 4 դեկտեմբեր 1979թ, պարբ. 31, Սերիա Ա թիվ 34): Ավելին, սույն հոդվածն անձին ձեռբակալելուց կամ կալանավորելուց հետո անհապաղ դատարանի կամ այլ պաշտոնատար անձի մոտ տանելու պահանջից հնարավոր բացառություն չի նախատեսում: Այլ կերպ որոշելը կհակասի

հոդվածի իմաստային բովանդակությանը (տե՛ս *Landent v. Poland*, թիվ 11036/03, պարբ. 75, 18 մարտ 2008թ.):

70. Սույն գործով դիմումատուն կասկածվում էր հանցագործության կատարման մեջ: 2007թ. փետրվարի 15-ին Արարատի մարզի առաջին ատյանի դատարանն անձի նկատմամբ կալանք նշանակելու մասին որոշում էր կայացրել դիմումատուի բացակայությամբ, քանի որ ենթադրվում էր, որ վերջինս գտնվում էր հետախուզման մեջ: Դատարանը նշում է, որ դատարանի հնարավորությունները արդարադատությունից խուսափող անձի ձերբակալման որոշման հարցը լուծելիս *in absentia* չի հակասում Կոնվենցիայի դրույթներին (տե՛ս *Garabayev v. Russia*, թիվ 38411/02, պարբ. 101, 7 հունիսի 2007թ.): Այնուամենայնիվ, 2007թ. ապրիլի 13-ին ոստիկանության կողմից ձերբակալվելուց հետո և, հետևաբար, վերոնշյալ որոշման հիման վրա կալանավորվելուց հետո նա Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով երբևէ չի տարվել դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ: Դատարանը նաև նշում է, որ հետախուզման մեջ գտնվող անձին ձերբակալելուց հետո դատարան չներկայացնելու պրակտիկան ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ճանաչվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքների խախտում (տե՛ս 45-րդ պարբերությունը):

71. Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

72. Դիմումատուն բողոքեց, որ 2007թ. հունիսի 15-ի իր վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից թողնվել է առանց քննության: Նա վկայակոչեց Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը և 13-րդ հոդվածը: Դատարանը գտնում է, որ այս բողոքը պետք է ուսումնասիրվի առանձին Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասին շրջանակներում, որտեղ ամրագրված է.

> *«4. Յուրաքանչյուր անձ, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունքի ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:*

Ա. Ընդունելիությունը

73. Դատարանը նշում է, որ այս գանգատը ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի իմաստով: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է ճանաչվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

74. Դիմումատուն պնդեց, որ ՀՀ վերաքննիչ դատարանի 2007թ. հունիսի 6-ի որոշումը դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի մասին բողոքն թողնել առանց քննության այն հիմնավորմամբ, որ մինչդատական վարույթն ավարտվել է, հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին: Ավելին, նման հիմքով բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ որևէ ներպետական դրույթ չկա:

75. Կառավարությունը պնդեց, որ այդ հարցին ՀՀ վճռաբեկ դատարանն արդեն անդրադարձել է իր 2008թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ (տե՛ս 44-րդ պարբերությունը): ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը պարտադիր է բոլոր դատարանների և նախաքննության մարմինների համար: Կառավարությունը այնուհետև խնդրեց Դատարանին սույն գործի կապակցությամբ հարցը լուծելիս հաշվի առնել այն հանգամանքը, որ էական միջոցառումներ են ձեռնարկվել բարձրացված հարցի կապակցությամբ:

2. Դատարանի գնահատականը

76. Դատարանը ևս մեկ անգամ նշում է, որ համաձայն իր դատական նախադեպերի, 5-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև 6-րդ հոդվածի 1-ին մասը, երաշխավորում է դատարան դիմելու իրավունքը, որը կարող է ենթարկվել իրավունքի բուն էությունը չսահմանափակող ողջամիտ սահմանափակումների (տե՛ս *Shishkov v. Bulgaria*, թիվ 38822/37, պարբ. 82-90, ՄԻԵԴ 2003-I (հատվածներ); և *Bochev v. Bulgaria*, թիվ. 73481/01, պարբ. 70, 13 նոյեմբեր 2008թ.):

77. Ավելին, 5-րդ հոդվածի 4-րդ մասը չի պարտադրում պայմանավորվող երկրներին կալանքից ազատ արձակելու հարցի լուծման համար ստեղծել երկրորդ ատյան: Այնուամենայնիվ, պետությունը, որը ստեղծում է նման համակարգ, պետք է

կալանավորվածներին սկզբունքորեն տրամադրի բողոքարկման միևնույն երաշխիքները, ինչպիսին առկա են առաջին ատյանի դատարանում (տե՛ս *Toth v. Austria*, 12 դեկտեմբեր 1991թ., պարբ. 84, Սերիա A թիվ. 224; *Rutten v. the Netherlands*, թիվ 32605/96, պարբ. 53, 24 հուլիս 2001թ.; *Lanz v. Austria*, թիվ 24430/94, պարբ. 42, 31 հունվար 2002թ.; և *Svipsta v. Latvia*, թիվ 66820/01, պարբ. 129, ՄԻԵԴ 2006-III (հատվածներ)):

78. Դատարանը նշում է, որ հայկական օրենքը, մասնավորապես՝ ՔԴՕ-ի 137-րդ հոդվածի 5-րդ մասը և 288-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետն երկարացնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը վերադաս դատարան բողոքարկելու իրավունք (տե՛ս վերը նշված 30-րդ և 37-րդ պարբերությունները): Սույն գործով, դիմումատուն միջնորդություն ներկայացրեց գրավի դիմաց ազատ արձակվելու խնդրանքով, որը մերժվել է Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ. հունիսի 8-ի որոշմամբ: Այնուհետև նա օգտվեց իր բողոքարկման իրավունքից՝ 2007թ. հունիսի 15-ին բողոք ներկայացնելով: Միևնույն ժամանակ հետաքննությունն ավարտվեց և քրեական գործը ուղարկվեց Արարատի մարզի առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար: 2007թ. հուլիսի 6-ին ՀՀ վերաքննիչ դատարանը որոշեց թողնել դիմումատուի 2007թ. հունիսի 15-ի բողոքն առանց քննության այն հիմքով, որ մինչդատական վարույթն արդեն ավարտվել է:

79. Դատարանը նշում է, որ ներպետական օրենսդրությունը սահմանում է հիմքերի սպառիչ ցանկ, երբ առաջին ատյանի դատարանի որոշումների բողոքարկումը կարող է թողնվել առանց քննության (տե՛ս վերը նշված 41-րդ պարբերությունը): Այդ ցանկը չի պարունակում այն հիմքերը, որոնց վրա հիմնվելով ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի բողոքի քննությունը: Այսպիսով, դիմումատուն զրկված է եղել ՀՀ վերաքննիչ դատարանի մատչելիության իրավունքից ներպետական օրենսդրությամբ չնախատեսված հիմքերով: Ամեն դեպքում, Դատարանը գտնում է, որ դիմումատուին կալանքի տակ պահելու հարցի դատական վերանայման մերժումը միայն այն հիմքով, որ քրեական գործի մինչդատական վարույթն արդեն ավարտված է, հանդիսանում է 5-րդ հոդվածի 4-րդ մասով

նախատեսված դատական քննության իրավունքի անհիմն սահմանափակում:

80. Փաստ է, որ մինչև ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի բողոքի մերժումը մարզային առաջին ատյանի դատարանի կողմից կայացվել էր որոշում դիմումատուին կալանքի տակ պահելը չփոփոխելու մասին, (տե՛ս վերը նշված 19-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, Դատարանն արդեն իսկ բազմաթիվ գործերի շրջանակներում գտել է, որ կալանքի տակ պահելու մասին որոշման դեմ ուղղված բողոքը քննելու մերժումը միայն այն հիմքով, որ ստորին դատարանի կողմից արդեն ընդունվել է կալանքի տակ պահելու ժամկետն երկարացնող նոր որոշում, հակասում է 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին (տե՛ս *Peša v. Croatia*, թիվ 40523/08, պարբ. 125-126, 8 ապրիլ 2010թ.; *Šebalj v. Croatia*, թիվ 4429/09, պարբ. 222-223, 28 հունիս 2011թ.; և *Hađi v. Croatia*, թիվ 42998/08, պարբ. 46-47, 1 հուլիս 2010թ.): Դատարանը ի վերջո նշում է, որ 2008թ. նոյեմբերի 28-ի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նման պրակտիկան համարել է անթույլատրելի և, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված երաշխիքները խախտող (տե՛ս վերը նշված 44-րդ պարբերությունը):

81. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

82. Դիմումատուն վերջում բարձրացրել է մի շարք այլ բողոքներ՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի հիման վրա:

83. Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերը և ինչքանով են նշված բողոքները իր իրավասության շրջանակնորում, գտնում է, որ դրանցում առկա չեն Կոնվենցիայի և կից Արձանագրություններով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումներ: Հետևաբար, համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, գանգատի այս մասը պետք է մերժվի որպես ակնհայտորեն անհիմն:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

84. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

85. Դիմումատուն պահանջեց տասնչորս հազար եվրո (14,000 եվրո) որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

86. Կառավարությունն առարկեց, որ ոչ նյութական վնասի դիմաց պահանջվող գումարը չափազանցված է: Ավելին, դիմումատուն չի պարզաբանել իր կողմից կրած ենթադրյալ ոչ նյութական վնասի տեսակը: Կառավարությունը ի վերջո խնդրեց դատարանին հաշվի առնել սույն դիմումի շրջանակներում բարձրացված խնդիրների առնչությամբ ձեռնարկված ընդհանուր միջոցառումները:

87. Դատարանը գտնում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս՝ սույն վճռով նշված կոնվենցիայի խախտումների հետևանքով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքից՝ Դատարանը տրամադրում է դիմումատուին 10,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Բ. Դատական ծախսեր

88. Դիմումատուն չի պահանջել դատական ծախսերի փոխհատուցում:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

89. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. *Հայտարարում է* դիմումատուի 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ը ընկած ժամանակահատվածում կալանքի տակ ենթադրյալ անօրինական պահելու վերաբերյալ գանգատը, նրա ձերբակալությունից հետո դատարանի առջև չներկայանացնելու և կալանքի տակ պահելու դեմ 2007թ. հունիսի 15-ի իր բողոքը քննելու մերժման վերաբերյալ գանգատները ընդունելի՝ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն, իսկ գանգատի մնացյալ մասն՝ անընդունելի:

2. *Վճռում է,* որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, այն է՝ դիմումատուին 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ը ընկած ժամանակահատվածում կալանքի տակ պահելը իրավական հիմք չի ունցել:

3. *Վճռում է,* որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ դիմումատուի ձերբակալումից հետո դիմումատուն չի ներկայացվել դատարան:

4. *Վճռում է,* որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում՝ 2007թ. հունիսի 15-ին կալանքի տակ գտնվելու դեմ դիմումատուի կողմից ներկայացված բողոքը քննելու մերժման առնչությամբ:

5. *Վճռում է, որ*
(ա) պատասխանող պետությունը, վճիռը կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի 10.000(տաս հազար) եվրո գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեակի հարկերը՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, որը պետք է փոխարկվի ՀՀ դրամի վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:
(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի

չափով պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոսը:

6. *Մերժում է* դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացյալ մասը:

Կատարված է անգլերեն, և գրավոր ծանուցվել է 2012թ. հունվարի 10-ին, համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ